ՍԴ/0099/ 01/13

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ

ԿԱԶՄՈՎ

Նախագահող դատավոր՝ Լեռնիկ Աթանյան
քարտուղարությամբ՝ Ինգա Ավագյանի
մասնակցությամբ՝ մեղադրող Հայկ Մկրտչյանի
պաշտպաններ՝ Արկադի Իսրայելյանի,
Արթուր Շամիրյանի,
Մարինա Հակոբյանի,
տուժող՝ Սամվել Մովսիսյանի
տուժողի իրավահաջորդ՝ Մերուժան Կալեյանի
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝ Արթուր Սաքունցի

2013թ. դեկտեմբերի 17-ին, N զորամասում, դռնբաց դատական նիստում, քննեց քրեական գործն ըստ մեղադրանքի
Սանթուր Սմբատի Դոմբրյանի, ծնված՝ 23.05.1994թ ք.Եղվարդ, հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուրի, նախկինում չդատված, ծառայում է ՊԲ 35383 զորամասում, որպես 3-րդ հրաձգային գումարտակի, 7-րդ վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի գնդացրորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, բն. Կոտայքի մարզ գ.Նոր Գեղի:
Սույն գործով կալանքի տակ է 14.01.2013թ.:
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:
Արմեն Լազրի Երեմյանի,ծնված՝ 20.04.1994թ ք.Ապարան, հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուրի, նախկինում չդատված, ծառայում է ՊԲ 35383 զորամասում, որպես 4-րդ հրաձգային գումարտակի, 11-րդ վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի հրաձիգ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, բն. Արագածոտնի

մարզ ք.Ապարան Բաղրամյան 23 բն. 1:
Սույն գործով կալանքի տակ չի եղել:
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:
Նարեկ Մխիթարի Սերոբյանի,ծնված՝ 16.06.1994թ ք.Արմավիր, հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուրի, նախկինում չդատված, ծառայում է ՊԲ 35383 զորամասում, որպես 3-րդ հրաձգային գումարտակի, 7-րդ վաշտի ապահովման դասակի վարորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, բն. ք. Մեծամոր, 6 շենք, բն. 35:
Սույն գործով կալանքի տակ չի եղել:
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

1.Գործի դատավարական նախապատմությունը.

ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնի կողմից 06.11.2012թ. ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 90955212 քրեական գործը:
Նախաքննության մարմնի կողմից 30.01.2013թ. Սանթուր Սմբատի Դոմբրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ 17.01.2013թ. մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: 06.02.2013թ. որոշմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխվել և մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, 358-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: 29.03.2013թ. որոշմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխվել և մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 358-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով այն բանի համար, որ նա ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի 1-ին ջոկում որպես գնդացրորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի հուլիս օգոստոսին, ՊԲ 35383 զորամասի շարահրապարակում, համածառայողների ներկայությամբ, խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության հետ, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված՝ պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, վաշտի համածառայողների ներկայությամբ ծաղրուծանակի է ենթարկել ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի զինծառայող, շարքային Հայկ Մերուժանի Կալեյանին:
Բացի այդ Սանթուր Սմբատի Դոմբրյանը ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի 1-ին ջոկում որպես գնդացրորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի հուլիս օգոստոսին, ՊԲ 35383 զորամասի շարահրապարակում, համածառայողների ներկայությամբ,

խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության հետ, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված՝ պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, վաշտի համածառայողների ներկայությամբ ծաղրուծանակի է ենթարկել ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի զինծառայող, շարքային Հայկ Մերուժանի Կալեյանին:
Բացի այդ Սանթուր Սմբատի Դոմբրյանը ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի 1-ին ջոկում որպես գնդացրորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի սեպտեմբերի 4-ին, ժամը 14-ի սահմաններում ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի շենքի դիմացի հարթակում, վաշտի անձնակազմի ներկայությամբ, խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, այն է՝ զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության կանոնները, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները՝ նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում մի խումբ անձանց՝ իր համածառայակից ընկերների, նույն զորամասի ժամկետային զինծառայողներ Նարեկ Մխիթարի Սերոբյանի և Արմեն Լազրի Երեմյանի հետ միասին պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով ծաղրուծանակի է ենթարկել ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի զինծառայող, շարքային Հայկ Մերուժանի Կալեյանին:
Բացի այդ Սանթուր Սմբատի Դոմբրյանը հանդիսանալով ՊԲ 35383 զորամասի 3-րդ գումարտակի, 7-րդ վաշտի, 1-ին դասակի, 1-ին ջոկի գնդացրորդ, կոչումով շարքային, 2012 թվականի դեկտեմբերի 31-ին, ժամը 12-ի սահմաններում, ՊԲ 35383 զորամասի, 5-րդ գումարտակի հետախուզական դասակի հրամանատար, լեյտենանտ Սամվել Արշավիրի Մովսիսյանին կանչել է առանձնազրույցի զորամասի 5-րդ գումարտակի առանձին դասակների պահեստարան, որտեղ՝ իբր վերջինիս կողմից իրեն մի քանի օր առաջ շարքից ուշանալու համար դիտողություն անելու կապակցությամբ, վիճաբանության մեջ է մտել իր նկատմամբ պետ հանդիսացող, լեյտենանտ Սամվել Մովսիսյանի հետ, որի ընթացքում վերջինիս զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ բռնություն գործադրելով նրա նկատմամբ՝ իր մոտ գտնվող դանակով դիտավորությամբ հարվածներ է հասցրել Ա.Մովսիսյանին՝ ձախից առաջային անութային գծով 5-6-րդ միջկողային և միջին անութային գծով ձախից գոտկային կողմնային շրջանների ծակած-կտրած վերքերի, փափուկ հյուսվածքների խորանիստ շերտերի վնասման ձևով պատճառելով նրա առողջությանը միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով:
Նախաքննության մարմնի կողմից 30.01.2013թ. Արմեն Լազրի Երեմյանին

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով:
29.03.2013թ. որոշմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ նա ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի ապահովման ջոկում որպես վարորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի սեպտեմբերի 04-ին, ժամը 14-ի սահմաններում ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի շենքի դիմացի հարթակում, խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության հետ, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված՝ պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, մի խումբ անձանց՝ իր համածառայակից ընկերներ, նույն զորամասի ժամկետային զինծառայողներ Սանթուր Սմբատի Դոմբրյանի և Նարեկ Մխիթարի Սերոբյանի հետ միասին վաշտի համածառայողների ներկայությամբ ծաղրուծանակի է ենթարկել համածառայող Հայկ Մերուժանի Կալեյանին, իսկ վերջինիս կողմից նման կատակները դադարեցնելու վերաբերյալ նկատողություն ստանալուց հետո, բռնելով վերջինիս համազգեստի օձիքից հրել և քաշքշել է նրան:
Նախաքննության մարմնի կողմից 30.01.2013թ. Նարեկ Մխիթարի Սերոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով:
29.03.2013թ. որոշմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ նա ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի ապահովման ջոկում որպես վարորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի սեպտեմբերի 04-ին, ժամը 14-ի սահմաններում ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի շենքի դիմացի հարթակում, խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության հետ, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված՝ պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, մի խումբ անձանց՝ իր համածառայակից ընկերներ, նույն զորամասի ժամկետային զինծառայողներ Սանթուր Սմբատի Դոմբրյանի և Արմեն Լազրի Երեմյանի հետ միասին վաշտի համածառայողների ներկայությամբ ծաղրուծանակի է ենթարկել համածառայող Հայկ Մերուժանի Կալեյանին, իսկ վերջինիս կողմից նման կատակները դադարեցնելու վերաբերյալ նկատողություն ստանալուց հետո, բռնելով վերջինիս համազգեստի օձիքից հրել և քաշքշել է նրան:
Սանթուր Սմբատի Դոմբրյանը ձերբակալվել է 14.01.2013թ.:
30.01.2013թ., 26.03.2013 որոշմամբ Արմեն Լազրի Երեմյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել հրամանատարության հսկողության հանձնելը:

30.01.2013թ. 26.03.2013 որոշմամբ Նարեկ Մխիթարի Սերոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել հրամանատարության հսկողության հանձնելը:
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.01.2013թ. որոշմամբ Սանթուր Սմբատի Դոմբրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.03.2013թ. որոշմամբ Սանթուր Սմբատի Դոմբրյանի նկատմամբ կիռառված խափանման միջոց կալանավորման տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով՝ 14.05.2013:
Գործը մեղադրական եզրակացությամբ 10.04.2013թ. ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

2.Ապացույցների հետազոտում և գնահատում

Դատական նիստի ընթացքում մեղադրող Հ. Մկրտչյանը դատարանին ներկայացրեց Սանթուր Սմբատի Դոմբրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք առաջադրելու մասին 06.11.2013թ. որոշումը:
30.04.2013թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է ,,Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին'' ՀՕ-34 օրենքը, համաձայն որի ամբաստանյալ Սանթուր Սմբատի Դոմբրյանի կատարած արարքները համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին, որի համար պատիժ է նախատեսվում ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով և դասվում է ծանր հանցագործությունների շարքին: Արարքի կատարման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան պատիժ էր նախատեսում ազատազրկում 3-12 տարի ժամկետով և դասվում էր առանձնապես ծանր հանցագործությունների շարքին: Օրենքի փոփոխության արդյունքում հանցագործության կատարման պահին գործող օրենքի հոդվածի սանկցիայի ստորին շեմն ավելի մեղմ է,քան նոր օրենքով նախատեսված պատժաչափի ստորին շեմն: Ամբաստանյալ Սանթուր Սմբատի Դոմբրյանի արարքը ենթակա է վերաորակման նոր օրենքի պահանջների համապատասխան և պատիժ նշանակելիս պետք է հիմք ընդունել արարքի կատարման պահին գործող օրենքի սանկցիայի ստորին շեմը:
ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝
1. Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:
2. Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:
2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:
3. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի համաձայն գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:
Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը:
Մեղադրանքը խստացման առումով փոխելը թույլատրվում է միայն սույն օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերով:
Նկատի ունենալով, որ Սանթուր Դոմբրյանի արարքը վերավորակելով վատթարանում է նրա վիճակը, ուստի դատարանը գտնում է, որ նրան պատասխանատվության պետք է ենթարկել հանցանքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքի ներքին սանդղակին համապատասխան:
Գնահատելով հետազոտված ապացույցները և գործի նյութերն իրենց համակցությամբ, դրանց գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ դատարանը հաստատված է համարում, որ ամբաստանյալ Սանթուր Սմբատի Դոմբրյանը ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի 1-ին ջոկում որպես գնդացրորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի հուլիս օգոստոսին, ՊԲ 35383 զորամասի շարահրապարակում, համածառայողների ներկայությամբ, խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության հետ, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված՝ պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, վաշտի համածառայողների ներկայությամբ ծաղրուծանակի է ենթարկել ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի զինծառայող, շարքային Հայկ Մերուժանի Կալեյանին:
Բացի այդ Սանթուր Սմբատի Դոմբրյանը ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ

գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի 1-ին ջոկում որպես գնդացրորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի հուլիս օգոստոսին, ՊԲ 35383 զորամասի շարահրապարակում, համածառայողների ներկայությամբ, խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության հետ, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված՝ պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, վաշտի համածառայողների ներկայությամբ ծաղրուծանակի է ենթարկել ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի զինծառայող, շարքային Հայկ Մերուժանի Կալեյանին:
Բացի այդ Սանթուր Սմբատի Դոմբրյանը ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի 1-ին ջոկում որպես գնդացրորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի սեպտեմբերի 4-ին, ժամը 14-ի սահմաններում ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի շենքի դիմացի հարթակում, վաշտի անձնակազմի ներկայությամբ, խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, այն է՝ զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության կանոնները, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները՝ նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում մի խումբ անձանց՝ իր համածառայակից ընկերներ, նույն զորամասի ժամկետային զինծառայողներ Նարեկ Մխիթարի Սերոբյանի և Արմեն Լազրի Երեմյանի հետ միասին պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով ծաղրուծանակի է ենթարկել ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ դասակի զինծառայող, շարքային Հայկ Մերուժանի Կալեյանին:
Բացի այդ Սանթուր Սմբատի Դոմբրյանը հանդիսանալով ՊԲ 35383 զորամասի 3-րդ գումարտակի, 7-րդ վաշտի, 1-ին դասակի, 1-ին ջոկի գնդացրորդ, կոչումով շարքային, 2012 թվականի դեկտեմբերի 31-ին, ժամը 12-ի սահմաններում, ՊԲ 35383 զորամասի, 5-րդ գումարտակի հետախուզական դասակի հրամանատար, լեյտենանտ Սամվել Արշավիրի Մովսիսյանին կանչել է առանձնազրույցի զորամասի 5-րդ գումարտակի առանձին դասակների պահեստարան, որտեղ՝ իբր վերջինիս կողմից իրեն մի քանի օր առաջ շարքից ուշանալու համար դիտողություն անելու կապակցությամբ, վիճաբանության մեջ է մտել իր նկատմամբ պետ հանդիսացող, լեյտենանտ Սամվել Մովսիսյանի հետ, որի ընթացքում վերջինիս զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ բռնություն գործադրելով նրա նկատմամբ՝ իր մոտ գտնվող դանակով դիտավորությամբ հարվածներ է հասցրել Ա.Մովսիսյանին՝ ձախից առաջային անութային գծով 5-6-րդ միջկողային և միջին անութային գծով ձախից գոտկային կողմնային շրջանների ծակած-կտրած վերքերի, փափուկ հյուսվածքների խորանիստ շերտերի վնասման

ձևով պատճառելով նրա առողջությանը միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով:
Ամբաստանյալ Արմեն Լազրի Երեմյանը ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի ապահովման ջոկում որպես վարորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի սեպտեմբերի 04-ին, ժամը 14-ի սահմաններում ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի շենքի դիմացի հարթակում, խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության հետ, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված՝ պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, մի խումբ անձանց՝ իր համածառայակից ընկերներ, նույն զորամասի ժամկետային զինծառայողներ Սանթուր Սմբատի Դոմբրյանի և Նարեկ Մխիթարի Սերոբյանի հետ միասին վաշտի համածառայողների ներկայությամբ ծաղրուծանակի է ենթարկել համածառայող Հայկ Մերուժանի Կալեյանին, իսկ վերջինիս կողմից նման կատակները դադարեցնելու վերաբերյալ նկատողություն ստանալուց հետո, բռնելով վերջինիս համազգեստի օձիքից հրել և քաշքշել է նրան:
Ամբաստանյալ Նարեկ Մխիթարի Սերոբյանը ծառայելով ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի ապահովման ջոկում որպես վարորդ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2012 թվականի սեպտեմբերի 04-ին, ժամը 14-ի սահմաններում ՊԲ 35383 զորամասի 5-րդ գումարտակի շենքի դիմացի հարթակում, խախտելով ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները, կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության պահպանության հետ, ֆիզիկական կեցվածքի և վարքագծի հետ կապված՝ պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, մի խումբ անձանց՝ իր համածառայակից ընկերներ, նույն զորամասի ժամկետային զինծառայողներ Սանթուր Սմբատի Դոմբրյանի և Արմեն Լազրի Երեմյանի հետ միասին վաշտի համածառայողների ներկայությամբ ծաղրուծանակի է ենթարկել համածառայող Հայկ Մերուժանի Կալեյանին, իսկ վերջինիս կողմից նման կատակները դադարեցնելու վերաբերյալ նկատողություն ստանալուց հետո, բռնելով վերջինիս համազգեստի օձիքից հրել և քաշքշել է նրան:
Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացքում ամբաստանյալ Սանթուր Սմբատի Դոմբրյանն իրեն մեղավոր է ճանաչել մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և օգտվելով իր դատավարական իրավունքից հրաժարվել է ցուցմունք տալուց:
Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացքում ամբաստանյալ Արմեն Լազրի Երեմյանն իրեն մեղավոր է ճանաչել և օգտվելով իր դատավարական իրավունքից հրաժարվել է ցուցմունք տալուց:
Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացքում ամբաստանյալ Նարեկ

Մխիթարի Սերոբյանն իրեն մեղավոր է ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ ծառայում է 35383 զորամասի 5-րդ գումարտակի ապահովման ջոկում որպես վարորդ, կոչումով շարքային: Հայկ Կալեյանին ճանաչել է համատեղ ծառայությունից:Իրեն մեղադրանք են առաջադրել խմբով Հ. Կալեյանին ծաղրուծանակի ենթարկելու համար, սակայն նման բան չի եղել: Ինքն ընդամենը մեկ անգամ է կատակել Կալեյանի հետ, ասելով՝ ,,տնաշեն էնքան ես չաղացել, ոնց որ հղի լինես'':Կալեյանը պատասխանել է, որ նման կատակներ իրեն դուր չեն գալիս ու պահանջել է այլևս չկրկնել:Իր և Կալեյանի միջև քաշքշոց չի եղել; Շուրջ երկու ու կես ամիս ծառայելուց հետո գնացել է հրաձգարան, որտեղ սկզբից կրակել են հրաձիգները: Կրակելուց հետո նրանք նստել են ամտոմեքենան, որը հրաձգարանի կրակելու տեղից հեռու էր մոտ 150-200 մետր: Կրակելուց հետո ինքը և մյուս զինվորները նստել են մեքենան, զրուցել միմյանց հետ և չի հիշում թե ով է նկատել, որ խրամատում գտնվող զինծառայողների մեջ խառնաշփոթ է: Ինքը տեսել է, որ վաշտի հրամանատարը գոռում էր բժշկին ու ձեռքերով կանչում: Մոտեցել է սպիտակ մարդատար ,,ԳԱԶ 24'' մակնիշի մեքենա, որը պատկանում էր բժշկին և նկատել է, թե ինչպես խրամատից մարդ են մտցրել մեքենայի մեջ: Ամբաստանյալների կատարած հանցանքը հիմնավորվել է նաև հետևյալ ապացույցներով.
Քրեական գործով տուժող Սամվել Արշավիրի Մովսիսյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2012թ. դեկտեմբերի 31-ին ինքը գտնվել է իր աշխատանքային սենյակում, որտեղ եղել են նաև համածառայակիցներ Կարապետյանն ու Անտոնյանը: Աշխատասենյակ է մտել Ս. Դոմբրյանն ու ասել, որ ցանկանում է առանձին խոսել իր հետ: Երբ ինքն ու Դոմբրյանը մնացել են երկուսով, վերջինս իրեն հարցրել է, թե ինչու է 15-20 օր առաջ շարքից ուշանալու համար հայհոյել իրեն: Ինքը պատասխանել է, որ նման բան չի եղել: Դոբրյանն ասել է, որ պատասխան է տալու հայհոյելու համար: Իրենց միջև առաջացել է քաշքշոց, որի ընթացքում Դոմբրյանն իր բաճկոնի գրպանից հանել է դանակը և 4-5 անգամ հարվածել է իր ձախ կողային մասին՝ պատճառելով մարմնական վնասվածք: Երբ ինքն օգնություն է կանչել, ներս է մտել Միեր Իսախանյանն ու բաժանել իրենց, որից հետո իրեն ցույց են տվել բուժօգնություն:Ժամկետային զինծառայող Հայկ Կալեյանի դեպքի կապակցությամբ իմացել է, որ վերջինս ինքնասպան է եղել: Միաժամանակ որպես սպայի կարող է ասել, որ գնդացրի ավտոմատ կրակելով ամենաքիչը երկու կրակոց է արձակվում:Գնդացրի փողից մինչև մակերեսը գնդակները մեկ կրակոցից տարբեր տեղերով հնարավոր է դուրս գան:
Քրեական գործով վկա Արման Վալերիկի Բոզոյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ծառայում է թիվ 35383 զորամասում: Ամբաստանյալներին, Հայկ Կալեյաին, տուժողի իրավահաջորդ Մ. Կալեյանին ճանաչում է, թշնամություն, բարեկամություն չունի, տուժող Ս. Մովսիսյանին չի ճանաչում: Հայկ Կալեյանին ճանաչել է որպես համագյուղացու: 2012թ. հունիսի 26-ին ծառայության են նշանակվել թիվ 35383 զորամասում: Շուրջ մեկ ամիս ծառայելուց

հետո զինվորական երդում են տվել: Կալեյանի հետ տեղի ունեցած դեպքի օրը՝ 2012թ. սեպտեմբերի 6-ին ինքը Սամսոն Հովհաննիսյանի հետ եղել է դիտորդ, ճանապարհի աջ կողմի վրա և մոտ 200 մետր հեռավորության վրա տեսել է թե ինչպես են զինծառայողները խառվնել իրար և ձայներից իմացել է, որ Հայկ Կալեյանը կրակել է իր վրա:Միաժամանակ տեսել է թե ինչպես են Հայկին դրել մեքենա ու տարել: Հայկ Կալեյանը ծառայության ընթացքում խնդիրներ չի ունեցել, սակայն այնքան էլ շփվող չէր: Զորամասում նրան հարգում էին, նրա հետ սիրով էին վերաբերվում: Կալեյանը հաճախակի էր բողոքում ոտքերի ցավերից, կարոտում էր հարազատներին և հաճախակի էր զանգում տուն: Երդման արարողության ժամանակ Կալեյանի հայրը իրեն հարցրել է թե ինչի է որդին մի տեսակ, ինքն էլ պատասխանել է, որ հարազատներին է կարոտում: Նույնիսկ մեկ անգամ ցանկացել է զորամասն ինքնակամ լքել, սակայն երբ փնտրել են նրան, նա ինքնակամ ներկայացել է: Մեկ անգամ էլ իմացել է, որ Կալեյանը միզել է տակը, սակայն զինծառայողների կողմից նրա այդ արարքը խոսակցության թեմա չի դարձել: 2012թ. հուլիսի 28-ից հետո ինքը եղել է բուժկետում, երբ վերադարձել է բուժկետից Հայկ Կալեյանի ճակատի ձախ հոնքի շրջանում վնասվածք է տեսել:Երբ հարցրել է թե ինչ է պատահել, վերջինս պատասխանել է, որ անձրևի պատճառով սայթաքել ու վայր է ընկել:Շարային պատրաստության ժամանակ Կալեյանը միշտ հետ է ընկել, քանի որ ոտքերը ցավում էին, երբեմն էլ ազատվել է ֆիզպատրաստությունից: Ինքը չի տեսել, որ զինծառայողները Կալեյանին ծաղրուծանակի ենթարկեն: Չի կարող ասել, թե Կալեյանն ինչի համար է նման քայլի դիմել:
Քրեական գործով վկա Արսեն Արամայիսի Թադևոսյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ծառայում է թիվ 35383 զորամասում: Տուժող Մովսիսյանին ճանաչում է համատեղ ծառայությունից, գտնվում է ընկերական հարաբերությունների մեջ:2012թ. դեկտեմբերի 31-ին, ժամը 12-ի սահմաններում ինքը եղել է գումարտակի զորանոցի 1-ին հարկում տեղակայված դասակների համար նախատեսված պահեստարանում՝ պահեստարանի վիճակը ստուգելու նպատակով:Այդ ժամանակ այնտեղ է մտել տուժող Մովսիսյանը շարքային զինծառայողի հետ միասին, հետագայում իմացել է, որ այդ զինծառայողը Սանթուր Դոմբրյանն է: Մովսիսյանն իրենից խնդրել է, որպեսզի իրենց մենակ թողնի: Երբ ինքը հարցրել է, թե ինչ է պատահե, Մովսիսյանը պատասխանել է, որ ինքն էլ չգիտի, թե ինչու է զինվորը ցանկանում իր հետ առանձին խոսել:Ինքը կատարել է ընկերոջ խնդրանքը և որոշ ժամանակ անց շարահրապարակում զինծառայողները խոսել են այն մասին, որ Մովսիսյանին դանակահարել են:Ինքն անմիջապես բարձրացել է գումարտակի զորանոց և տեսել 14-րդ վաշտի սպայական սենյակում Մոնվսիսյանին նստած վիճակում, իսկ նրա ձախ կողքին՝ որովայնի և կրծքավանդակի շրջանում արյունահոսող վերք: Ինքը Մովսիսյանից հարցրել է, թե ինչ է պատահել, ով է նման վնասվածք պատճառել, վերջինս պատասխանել է, որ ինքն էլ չգիտի թե ինչի համար է իր հետ պահեստարան ներս մտած զինվորը դանակահարել իրեն:
Քրեական գործով վկա Մայիս Կարապետի Անտոնյանը դատաքննության ընթացքում

ցուցմունք է տվել այն մասին, որ ծառայում է 35383 զորամասում որպես 5-րդ գումարտակի նռնականետային դասակի հրամանատար, կոչումով ավագ լեյտենանտ: Տուժող Մոնսիսյանին ճանաչում է համատեղ ծառայությունից, իսկ ամբաստանյալ Ս. Դոմբրյանին ճանաչել է դեմքով՝ որպես նույն զորամասի զինծառայող: 2012թ. դեկտեմբերի 31-ին, ժամը 12-ի սահմաններում ինքը Մովսիսյանի հետ եղել է վերջինիս ծառայողական սենյակում: Այդ ժամանակ առանց սենյակ մտնելու դռան մոտից առանց ներկայանալու մի զինծառայող դիմել է Մովսիսյանին, խնդրելով մեկ րոպեով դուս գալ սենյակից:Որոշ ժամանակ անց գումարտակի շենքի առաջին հարկում գտնվող շտաբի պետի աշխատասենյակի մոտ վախեցած և հուզված վիճակում իրեն է մոտեցել Մովսիսյանը և ասել, որ նայեն թե իր կողքն ինչ է եղել:Երբ ինքը բարձրացրել է Մովսիսյանի համազգեստը, նկատել է նրա ձախ կողքին, որովայնի շրջանում արյունահոսող վերք, նման մի վերք էլ նկատել է կրծքավանդակի շրջանում:Մովսիսյանն իրեն ասել է, որ զինծառայողը դանակով հարվածել է իրեն այն բանի հմար, որ իբր թե որոշ ժամանակ առաջ շարքից ուշանալու և շարքում ուղիղ չկանգնելու համար ինքը հայհոյել է, երբ ինքը պատասխանել է, որ նման բան չի եղել, վերջինս դանակով մի քանի անգամ հարվածել է իր մարմնի տարբեր մասերին:
Քրեական գործով վկա Միեր Գարիկի Իսախանյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ծառայում է 35383 զորամասում որպես ժամկետային զինծառայող:2012թ. դեկտեմբերի 31-ին, ժամը 12-ի սահմաններում ինքը եղել է 5-րդ հրաձգային գումարտակի շենքի մուտքի մոտ և գումարտակի շենքի առաջին հարկում գտնվող առանձին դասակի պահեստարանից ձայներ է լսել և անմիջապես շտապել է այնտեղ և տեսել է պահեստարանի դուռը բաց վիճակում, որտեղ տեսել է Մովսիսյան Սամվելին և մի անծանոթ զինծառայողի իրար քաշքշելով: Ինքն անմիջապես բաժանել է նրանց և դուրս եկել պահեստարանից: Հետագայում է իմացել, որ իրենից հետո Մովսիսյանին դանակահարել են, բայց թե ով չգիտի:
Քրեական գործով վկա Վոլոդյա Նորայրի Խաչատրյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2012թ. հունիսի 25-ին զորակոչվել է բանակ ու ծառայել թիվ 35383 զորամասում՝ 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի, 3-րդ դասակի 2-րդ ջոկի գնդացրորդ, կոչումով շարքային: Նույն ժամանակ պարտադիր ժամկետային զինծառայության է զորակոչվել նաև Հայկ Մերուժանի Կալեյանը: Կալեյանին ճանաչել է զորամասից, նրա հետ գտնվել է ընկերական հարաբերությունների մեջ: Վերջինս իրեն միշտ վստահել ու կիսվել է հետը: Հայկ Կալեյանը հաճախակի էր խոսում իրենց տան մասին և ցանկանում էր գնալ տուն, ինչպես նաև ցանկանում էր ծառայությունից ազատվել: Նա ուներ առողջական խնդիրներ և հաճախակի էր բողոքում ծնկների շրջանում ցավերից: 2012թ. սեպտեմբերի 4-ին Կալեյանը զանգել է հորը, թե ինչի մասին է խոսացել, չի կարող ասել: Նույն օրը ինքն էլ է զանգել իրենց տուն:Կալեյանը ծառայության ընթացքում խնդիրներ չի ունեցել սպայական անձնակազմի հետ, ավելին, նրան հաճախակի էին

ազատում ֆիզպատրաստությունից:2012թ. սեպտեմբերի 6-ին վաշտի անձնակազմի հետ մեկնել են հրաձգարան: Ինչպես ինքն այնպես էլ Կալեյանը եղել են գնդացրորդ: Կրակային գնալուց առաջ Կալեյանի տրամադրություն մի քիչ վատ է եղել:Շրջափակման ժամանակ Կալեյանն իրեն ասել է՝ ,,էսի վերջն է, էլ չեմ դիմանում'': Վերջին կրակողը Կալեյանն էր:Երբ Կալեյանը մտել է խրամախորշ նրանից հետո կանգնած է եղել սերժանտը, իսկ սերժանտից որոշ հեռավորության վրա կանգնած է եղել վաշտի հրամանատարը: Վազող թիրախների վրա կրակելու հրամանն արձակել է վաշտի հրամանատարը: Մինչև հրամանատարի կողմից հրաման արձակելը կրակողի հետևում կանգնած սերժանտը ձեռքին եղած դրոշակը բարձրացնում է, որն էլ նշանակում է, որ կրակողը պատրաստ է: Կալեյանն երեք անգամ կրակ է արձակել թիրախների վրա, որից հետո վերցրել է զենքը և շրջվել դեպի զինծառայողները, սակայն ոչ մի արտահայտություն չի արել: Այնուհետև զենքը դրել է գետնին, կռացել, փողը ուղղել որովայնին: Ինքն անմիջապես վազել է դեպի Կալեյանը: Իր հետևից վազել է վաշտի հրամանատար Ալեքսանյանը: Մինչ Կալեյանին հասնելը լսել է կրակոցի ձայն, վազելով մտել է խրամախորժ: Հասնելով Կալեյանին տեսել են նրան դեմքով ընկած գետնին, զենքը կողքին:Իրենք Կալեյանին շրջել են մեջքի վրա, նա ոչինչ չի խոսել, միայն գոռացել է: Վաշտի հրամանատարի զանգելուց հետո որոշ ժամանակ անց մոտեցել է ,,ԳԱԶ 24'' մակնիշի ավտոմեքենա և Կալեյանին տեղափոխել են Մարտունու զինհոսպիտալ: Կալեյանը հաճախակի է իրեն ասել, որ որոշ զինծառայողներ՝ Սանթուր Դոմբրյանը Նարեկ Գալստյանը Արմեն Սերոբյանը իր հետ կատակ են արել, ասելով՝ ,,ոնց որ հղի լինես'', որը ինքը չի ընդունել: Իսկ երբ ինքը նշված անձանց ասել է, որ նման կատակ չանեն, վերջիններս պատասխանել են, որ նա է թույլ տվել, դրա համար էլ կատակ են արել:Ինքը խնդրել է, որ Կալեյանի հետ այլևս նման կատակներ չանեն, նրանք էլ խոստացել ե, որ չեն անի:Իրեն հայտնի է, որ Կալեյանը զորանոցում քնել է 2-րդ հարկում և գիշերը միզել է անկողնում, որի պատճառով զինծառայողների մոտ այդ կապակցությամբ խոսակցություն չի եղել:Մեկ անգամ էլ Կալեյանը ցանկացել է զորամասն ինքնագլուխ լքել, սակայն տարածքից դուրս չի եկել և մոտ մեկ ու կես ժամ եղել է տարածքում գտնվող մոշի թփերի մոտ նստած: Կալեյանն իրեն պատմել է, թե ինչպես է անձրևոտ եղանակին սայթաքել ու ընկել գետնին, որի հետևանքով վնասել է հոնքը:Ինքը չի կարող ասել, թե ինչի համար է Կալեյանը ինքնասպանություն գործել, սակայն պնդում է, որ Կալեյանն է ինքն է իրեն կրակել: Ինքը տեղյակ է նաև, որ Կալեյանը տառապել է գիշերամեզությամբ, սակայն այդ դրա համար զինծառայողների կողմից նրա նկատմամբ վատ կարծիք չի ստեղծվել:
Քրեական գործով վկա Գևորգ Սամվելի Ղազարյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2012թ. հունիսի 26-ին զորակոչվել է ժամկետային զինծառայության և նշանակվել ծառայելու թիվ 35383 զորամասում 5-րդ հրաձգային գումարտակում 15-րդ հրաձգային վաշտի 3-րդ դասակի 3-րդ ջոկում որպես հրաձիգ, կոչումով շարքային: Ամբաստանյալներին ճանաչում է որպես համածառայակիցների: Համատեղ ծառայությունից ճանաչել է նաև Հայկ Կալեյանին: 2012թ. սեպտեմբերի 6-

ին, վաշտի անձնակազմի հետ մեկնել են հրաձգարան: Ըստ գորություն ունեցող կարգի սկզբից կրակել են հրաձիգները: Կրակելուց հետո իրենք նստել են ավտոմեքենա և սպասել մինչև կկրակեին գնդացրորդները և դիպուկահարները: Ավտոմեքենայի մեջ նստած ժամանակ դրսից ձայներ է լսել և նկատել է զինվորների շարժը: Ինքը չի իջել ավտոմեքենայից, սակայն նկատել է, որ Կալեյանին դրել են սպիտակ գույնի ,,ԳԱԶ 24'' մակնիշի ավտոմեքենայի մեջ: Երբ համածառայակիցները նստել են ավտոմեքենա նրանցից լսել է, որ Կալեյանն ինքն իրեն կրակել է: Ծառայության ընթացքում Կալեյանը ոչ մի խնդիր չի ունեցել:Սպայական անձնակազմը նրա նկատմամբ վերաբերվել է նորմալ: Նա հաճախակի էր բողոքում ոտքերի ցավից, որի պատճառով նրան հաճախակի էր դիմում բուժկետ:Ինքը 2-3 անգամ լսել է, թե ինչպես Նարեկ Գալստյանը, Սերոբյանը, Ղոմբրյանը կատակել Կալեյանի հետ, ասելով՝ ,,ոնց որ հղի լինես, երբ պետք է ծննդաբերես'': Կալեյանը խնդրել է, որ իր հետ նման կատակ չանեն: Ծառայության ընթացքում Կալեյանն ամենաշատը կիսվել է համածառայակից Վոլոդյայի հետ: Տեղյակ է եղել նաև, որ Կալեյանն ընկնելու հետևանքով վնասվածք է ստացել հոնքի շրջանում: Հիշում է դեպք, երբ Կալեյանը գիշերը միզել է անկողնում, սայակն ինչպես զինծառայողների, այնպես էլ սպայական անձնակազմի կողմից դա խոսակցության թեմա չի դարձել: Քրեական գործով վկա Դավիթ Սերժիկի Ալեքսանյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ծառայել է 35383 զորամասում որպես վաշտի հրամանատար, կոչումով կապիտան: Ամբաստանյալներին և Հայկ Կալեյանին ճանաչել է որպես նույն զորամասի զինծառայողների: Համաձայն նախապես կազմված գրաֆիկի և զորամասի հրամանատարի 05.09.2012թ. N 496 հրամանի 2012թ. սեպտեմբերի 6-ին վաշտի անձնակազմը մեկնել է հրաձգարան, ինքը հանդիսացել է հրաձգության ավագ ղեկավարը, նախապես զինծառայողներին բացատրել է անվտանգության կանոնները: Կրակող զինվորը փանփուշտները ստացել ու գնացել է հրաձգության տեղը: Քանի որ գնդացիրը մենակ դժվար է մարտական վիճակի բերել, ուստի Կալեյանին օգնել է Սիրադեղյանը, որից հետո դուրս եկել խրամաբջջից: Ինքն ըստ նախաքննության մարմնի աշխատակիցների կողմից կատարած չափումների 14 մետր հեռավորության վրա էր կանգնած Կալեյանից: Կալեյանը զեկուցել է, որ պատրաստ է մարտին: Նրանից հետո կանգնած դրոշակակիրը ազդանշան է տվել, որ թիրախը բարձրացնեն: Կալեյանից առաջ կրակող զինվորները եղել են կանգնած հրամանատարական կետից հետո: Կալեյանի կողմից կրակոց արձակելուց հետո նա միանգամից շրջվել է դեպի ձախ: Ինքը հարցրել է նրան թե ինչ է եղել ու վազելով գնացել դեպի նա, մտածելով, որ երևի զենքն է խափանվել: Կալեյանը ոչինչ չի պատասխանել: Ինքը պահանջել է, որ նա զենքը դնի գետնին: Ինքը Կալեյանից եղել է մոտ 4 մետր հեռավորության վրա, երբ վազել է դեպի նա և մոտ մեկ մետր հեռավորության վրա նրան տեսել է գնդացրի փողին հենված ու այդ պահին լսել է կրակոց: ինքն անմիջապես մոտեցել է Կալեյանին, գոռալով օգնություն է կանչել:Բժշկն իր անձնական օգտագործման ավտոմեքենայով ենթասպա Պետրոսյանի հետ միասին նրան տեղափոխել են

հոսպիտալ: Եղել են դեպքեր, երբ Կալեյանը վատառողջ լինելու պատճառով չի մասնակցել հրաձգությանը, ինչպես նաև հաճախակի հիվանդության պատճառով նրան տեղափոխել են բուժկետ: Կալեյանը տառապել է նաև գիշերամիզությամբ, սակայն չի եղել դեպք, որ նրան դրա համար համածառայողները նեղություն տային:Կալեյանը ընկերական հարաբերությունների մեջ է եղել Վոլոդյա Խաչատրյանի հետ: Կատարված դեպքից հետո ինքը զրուցել է Խաչատրյանի հետ՝ ցանկանալով պարզել թե ինչի է Կալեյանը նման քայլի դիմել, վերջինս էլ ասել է, որ Կալեյանը ցանկացել է փախչել զորամասից, քանի որ ընտանեկան խնդիրներ է ունեցել: Հիշում է դեպք, երբ ինքը տեսել է Կալեյանին հոնքը վնասված վիճակում, նրան ուղեկցել է բուժկետ, իսկ հաջորդ օրը Կալեյանին ներկայացրել է գումարտակի հրամանատարին և ծառայողական քննություն անց կացվել հոնքի վնասվածքի պատճառը պարզելու համար: Համաձայն գորություն ունեցող կարգի զորանոցից դուրս գնացողների վերաբերյալ մատյանում համապատասխան նշում է կատարվում: Կալեյանը այդ օրը զորանոցից դուրս գտնվող զուգարան է գնացել, որը գրանցվել է մատյանում: Ժամը 03.00-ի սահմաններում երբ Կալեյանը վերադարձել է զորանոց, հերթապահները տեսել են նրան ցեխոտված վիճակում, իսկ հոնքը՝ վնասված, անմիջապես վիրակապ են դրել, որի մասին նաև բացատրություն է տվել Կալեյանը գումարտակի հրամնատարին:
Քրեական գործով վկա Գեղամ Արարատի Սիրադեղյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ծառայում է թիվ 35383 զորամասում 5-րդ գումարտակի 15-րդ վաշում 3-րդ դասակի 3-րդ ջոկի հրամանատար, կոչումով կրտսեր սերժանտ: Հայկ Կալեյանին ճանաչել է որպես իր ջոկի զինծառայողի, որևէ խնդիր նրա հետ կապված չի եղել: Կալեյանը հաճախակի է բողոքել ոտքերի ցավից: 2012թ. սեպտեմբերի 6-ին, առավոտյան գնացել են հրաձգարան: Երբ կրակելու հերթը Կալեյանինն էր, նա մտել է խրամատ: Ինքն օգնել է Կալեյանին, ժապավեը հարմարեցրել նրա զենքին, զենքը լիցքավորել է Կալեյանը: Ինքը դուրս է եկել խրամատից, որից հետո Կալեյանը զեկուցել է, որ պատրաստ է: Ինքը Կալեյանից եղել է մոտ 5-6 մետր հետավորության վրա: Երեք փամփուշտ կրակելուց հետո Կալեյանը շրջվել է: Վաշտի հրամանատարը հարցրել է թե ինչի է շրջվել, ինչ է պատահել: Գնդացիրը տեղում էր, Կալեյանը աջ ձեռքով բռնել է զենքը ու շրջվել դեպի զինծառայողները: Այդ պահին զինվորները խառնվել են իրար, իսկ վաշտի հրամանատարը իր կողքից անցնելով գնացել է դեպի Կալեյանը,ասելով՝ ,,սպասի'': Այդ պահին լսվել է կրակոց, որից հետո վաշտի հրամանատարը մտել է խրամաբջջիջ:Ինքը չի կարող ասել, թե ինչի է Կալեյանին դրդել ինքնասպան լինելուն: Լսել է, որ Կալեյանը նման քայլի գնացել է ծառայությանը չհամակերպվելով: Ինքը զորանոցում քնել է Կալեյանին երեք մահճակալ այն կողմ: Գիտի որ Կալեյանը գիշերամիզել է անկողնում:
Քրեական գործով վկա Էդուարդ Ռոլանդի Խաչատրյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ծառայում է 35383 զորամասի 5-րդ գումարտակում: Ամբաստանյալ Դոմբրյանին չի ճանաչում, մյուս

ամբաստանյալներին, տուժող Մովսիսյանին ճանաչում է, թշնամություն բարեկամություն չունի: Հայկ Կալեյանին չի ճանաչում: 5-րդ գումարտակի առանձին դասակի միջանցքում տեսել է ամբաստանյալ Դոմբրյանին և Մովսիսյանին միմյանց քաշքշելով, տեսել է, որ զինծառայողներից մեկը բաժանում է նրանց:Չգիտի թե նրանց միջև ինչի է վեճ առաջացել և ով ում է խփել:Ինքը Կալեյանի հետ կատարված դեպքից տեղյակ չէ, քանի որ եղել են ճամբարային հավաքների, միայն իմացել է, որ վերջինս ինքնասպան է եղել, բայց չի իմացել ինչի համար:
Տուժողի իրավահաջորդ Մերուժան Հայկի Կալեյանը դատաքննության ընթացքում հայտնել է, որ որդին Հայկ Կալեյանը առողջական խնդիրներ չի ունեցել և զինծառայության է զորակոչվել առողջ վիճակում, միայն երբեմն բողոքում էր ծնկի ցավից: Երբ ինքը գնացել ու մասնակցել է որդու երդման արարողությանը, վերջինս ծառայությունից չի բողոքել, միայն խնդրել է փոխել զորամասը, սակայն ինքը ոչ մի միջոց չի ձեռնարկել: Այդ ժամանակ ինքը հանդիպել է զորամասի սպաներից կապիտանի հետ, հայտնել որդու ոտքի ցավերի մասին և խնդրել որպեսզի նրան լավ նայեն: Նշել է, որ որդին շատ շուտ էր ամեն ինչից նեղանում: Դիահերձման ներկա գտնված հարազատներն իրեն ասել են, որ որդու մարմնին եղել է կրակոցի երեք վնասվածք: Ըստ իրեն Հայկը չէր կարող իր վրա կրակել երեք անգամ: Ինքը գտնում է, որ որդու վրա կրակել են հեռու տեղից:
Դատաքննության ընթացքում հարցաքննված փորձագետ Հրայր Համլետի Ղուկասյանը պնդել է իր կողմից տրված փորձաքննության եզրակացությունը, միաժամանակ հայտնել է, որ փորձաքննության ներկայացված գնդացիրը եղել է սարքին վիճակում, ձգանի մեկ հպման դեպքում մի քանի կրակոց կարող էր արձակվել և վնասվածքները կարող են տեղակայված լինել մարմնի տարբեր մասերում:
Դատաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Վարդան Հայկի Կալեյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Հայկ Կալեյանն իր եղբոր որդին է: Դիահերձարանում ինքը ներկա է գտնվել դիահերձմանը և տեսել է Հայկի մարմնի վրա կրակոցի երեք հետք, որոնցից երկուսը մի կողմի վրա են եղել, երրորդը մեկ այլ կողմի: Աջ ձեռքի մատները, բացի բութ մատից, սևացած էին:
Դատաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Ռուզաննա Մելիքի Ծատրյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ծառայում է 35383 զորամասում, կոչումով ենթասպա է: Կալեյանին առաջին անգամ հանդիպել է զորամասում ծառայության գալու օրը, որն իրեն դիմել է ատամի ցավի պատճառով, ինքը ցույց է տվել առաջին օգնությունը: 2-3 անգամ էլ դիմել է բուժօգնության, ըստ Կալեյանի հայտարարության զուգարանի ճանապարհին ընկնելու ու հոնքի շրջանում վնասվածք ստանալու համար: Յուրաքանչյուր անգամ ինքը զեկուցել է գումարտակի հրամանատարին և գրառել համապատասխան մատյանում:Գոյություն ունեցող կարգի համաձայն զինծառայողին բուժկետ է տանում սանհրահանգիչը: Ամեն անգամ ծառայության գնալիս սահմանված ժամին սանհրահանգիչի հետ կատարվում է ստուգայց: Ժամը 16-ի սահմաններում բուժօգնության կարիք

ունեցողներին տանում են բուժկետ, որտեղ համապատասխան գրառում են կատարում մատյանում և ցույց տալիս առաջին բուժօգնությունը, եթե անհրաժեշտություն է առաջանում՝ ուղարկում են բժշկի մոտ: Եթե զինծառայողը ստացել է մարմնական վնասվածք գրառումից հետո տեղյակ է պահվում հրամանատարությանը, որոնք էլ ձեռնարկում են համապատասխան միջոցներ պարզելու համար վնասվածքի առաջացման պատճառները:
Դատաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Նվարդ Վանիկի Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Հայկ Կալեյանն իր որդին է, որը զորակոչվել է զինվորական ծառայության և նշանակվել ծառայելու թիվ 35383 զորամասում: Ծառայության ընթացքում ինքը եղել է զորամասում, հանդիպել որդու հետ: 2012թ. սեպտեմբերի 4-ին, ժամը 21-ի սահմաններում որդին զանգել է տուն ու մոտ 30 րոպե զրուցել է, որի ընթացքում ինքը հարցրել է որդու ոտքերի ցավերից, որդին էլ պատասխանել է, որ լավ է: Նույն թվականի սեպտեմբերի 6-ին զանգել են իրենց ու հայտնել, որ որդին ինքնասպան է եղել: Երբ ինքը գնացել էր որդու երդման արարողությանը մասնակցելու, տեսել է վերջինիս հոնքի շրջանում վնասվածք, իսկ երկրորդ անգամ որդուն այցելելու ժամանակ վերքը եղել է չորացած: Երբ որդուն հարցրել է վնասվածքի մասին, վերջինս պատասխանել է, որ աստիճաններից ընկնելու հետևանքով է վնասվածք ստացել: Ինքը սկզբից հավատացել է, իսկ հետո ոչ: Որդին Դավիթ Ալեքսանյանից երբեք չի բողոքել, սակայն իր կարծքիով որդուն սպանել է Դավիթը՝ ուշ կրակելու համար: Մաիժամանակ հայտնել է, որ որդին բացի գրելուց մնացած բոլոր գործողությունները կատարել է ձախ ձեռքով:
Դատաբժշկական փորձաքննության թիվ 9 եզրակացության համաձայն Ս.Մովսեսյանի ստացած մարմնական վնասվածքները՝ ձախից առաջային անութային գծով 5-6-րդ միջկողային և միջին անութային գծով ձախ գոտկային կողմնային շրջաններում ծակած-կտրած վերքերի ձևով, փափուկ հյուսվածքների խորանիստ շերտերի վնասումով, հասցվել է միակողմանի սայր ունեցող ծակող-կտրող առարկայով, հնարավոր է նշված ժամկետում և հանգամանքներում, որոնք առաջացրել են առողջությանը միջին վնաս՝ առողջության տևական քայքայումով:
Դատաբժշկական փորձաքննության թիվ 9/լրացում/ եզրակացության համաձայն՝ ներկայացված դանակի ձևից, չափերից և համեմատելով տուժող Ս.Մովսեսյանի մարմնի վրա գտնվող վերքի ձևի պարամետրերից, այն է՝ որ ունի հարթ եզրեր, մի անկյունը բութ է, մյուսը՝ սուր, որը նշանակում է, որ ծակող-կտրող գործիքը կամ առարկան ունի միակողմանի սուր եզր, ինչպիսին է հետազոտվող դանակը: Ուստի կարելի է ենթադրել, որ փորձաքննությանը ներկայացված դանակով նման բնույթի մարմնական վնասվածք պատճառելը հնարավոր է:
Դատահետքաբանական փորձաքննության թիվ 25/13 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված դանակը գործարանային արտադրության, տնտեսակենցաղային նշանակության խոհանոցային դանակ է և սառը զենք չի հանդիսանում: Փորձաքննությանը ներկայացված Ս.Մովսեսյանի հագուստների վրա առկա միջանցիկ վնասվածքները կտրվածքներ են և առաջացել են ծակող-կտրող

մեկսայրանի շեղբ ունեցող առարկայի ներգործության արդյունքում: Ելնելով վնասվածքների բնույթից, չափսերից, տեղակայումից և ներկայացված դանակի շեղբի չափային տվյալներից, կարելի է եզրակացնել, որ վերոհիշյալ վնասվածքները կարող էին առաջանալ ինչպես ներկայացված դանակի, այնպես էլ նմանատիպ շեղբ ունեցող այլ առարկայի ներգործության արդյունքում:
Առարկաները ճանաչման ներկայացնելու արձանագրության համաձայն՝ Ա.Մովսեսյանը զննելով իրեն ճանաչման ներկայացված դանակները, մատնացույց արեց երրորդ համարի տակ տեղադրված դանակը և հայտարարեց, որ Ս.Դոմբրյանն այդ դանակով է հարվածել իրեն: Ինքն այդ դանակը ճանաչում է դրա չափերից ու ձևից, ինչպես նաև փայտյա կոթից:
05.02.2013թ կայացված որոշման համաձայն՝ Ս.Մովսեսյանի զինորական բաճկոնը, երկարաթև մայկան և հանցագործության գործիք հանդիսացող դանակը ճանաչվել են որպես իրեղեն ապացույցներ:
Դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 786/31 եզրակացության համաձայն՝ Հ.Կալեյանի մահը պայմանավորված է արյան սուր կորստով, որն էլ հետևանք է եղել որովայնի հրազենային՝ գնդակային միջանցիկ վնասվածքներով: Հ.Կալեյանի դիակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ հայտնաբերվել են որովայնի առաջային մակերեի շրջանի հյուսվածքային դեֆեկտներ / հրազենային մուտքի անցքեր/ և աջից գոտկային, ձախից սրբանային, և նստատեղի ձախ կեսի շրջանների հրազենային ելքի անցքեր: Հ. Կալեյանը հրազենային վնասվածքներ ստալու պահին որովայնի առաջային մակերեսով ուղղված է եղել դեպի հրազենի փողաբերանի կտրվածքը: Հրազենային մուտքի անցքերը տեղակայված են որովայնի առաջային մակերեսին՝ թիվ 1,2,3 իսկ հրազենային ելքի անցքերը տեղակայված են ձախից նստատեղի և սրբանի շրջաններում՝ թիվ 4 և թիվ 5 , ինչպես նաև աջից գոտկային շրջանում՝ թիվ 6: Թիվ 1 հրազենային կրակոցը, որը համապատասխանում է թիվ 6 հրազենային ելքի անցքին, ունի առաջից-հետ, վերևից-ներքև և թեթևակի աջից-ձախ ուղղություն:Թիվ 2 հրազենային կրակոցը, որը համապատասխանում է թիվ 5 հրազենային ելքի անցքին, ունի առաջից-հետ, աջից-ձախ, և վերևից-ներքև ուղղություն, իսկ թիվ 3 հրազենային կրակոցը, որը համապատասխանում է թիվ 4 հրազենային ելքի անցքին, ունի՝ առաջից-հետ, վերևից ներքև և թեթևակի ներսից-դուրս ուղղություն:Վերը նշված բոլոր հրազենային վնասվածքները կատարվել են տվյալ զենքին բնորոշ կրակոցների լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններում, որը հիմնավորվում է ինչպես դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված հրազենային մուտքի անցքերի շուրջը այրվածքներով, մրի նստվածքով, մաշկի մեջ ներմղված սև մասնիկների առկայություններով, ինչպես նաև բժշկաքրեագիտական և հյուսվածքաբանական ուսումնասիրություններով: Հ. Կալեյանի դիակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ նրա աջ դաստակի ափային մակերեսին ,,կապտավուն և սևացած'' հատվածներ չեն հայտնաբերվել: Իսկ եթե սևացած հատված եղել է, ապա այն դեպքի վայրում մաքրվել է դաստակների շրջաններից սպիրտով թրջված թանզիվե

խծուծներով նմուշներ ,,քսուկներ վերցնելու հետևանքով'' համաձայն դեպքի վայրում դիակի արտաքին զննության արձանագրության լուսապատճենի տվյալների:
Հետմահու դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փորձաքննության թիվ 22/13 եզրակացության համաձայն՝ Հ.Կալեյանը գտնվել է դեզադապտացիոն վիճակի մեջ, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և պահվածքի վրա:
Հ.Կալեյանը ոչ ամբողջ ծավալով է հասկացել իր գործողությունների փաստացի նշանակությունը և ոչ ամբողջ ծավալով է կարողացել ղեկավարել դրանք:
Վերոհիշյալ դեզադապտացիոն վիճակի առաջացման պայման են հանդիսացել Հայկ Մերուժանի Կալեյանի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ծառայողական կյանքին դժվար հարմարվողականությունը, ներանձնային ֆրուստրացիան զինծառայությունից ազատվելու անհնարինության պատճառով, ինչպես նաև Ալեքսանդր Պետրոսյանի, Սանթուր Դոմբրյանի, Նարեկ Սերոբյանի, Արմեն Երեմյանի, Նարեկ Գալստյանի որոշմամբ նկարագրված գործողություններն ինչպես առանձին առանձին, այնպես էլ միասնական:
Դեպքի վայրի զննություն կատարելու մասին 06.09.2012թ. արձանագրության համաձայն, դիակի զննություն կատարելու մասին 06.09.2012թ. արձանագրությամբ և քրեական գործի այլ նյութերով:
Սակայն վերոնշյալ անձանց գործողությունների և Հ.Կալեյանի ինքնասպանություն գործելու նախորդող հոգեվիճակի մեջ չկա ուղղակի պատճառահետևանքային կապ:

3. Դատարանի իրավական վերլուծությունները

Ամբաստանյալ Սանթուր Սմբատի Դոմբրյանի արարքների որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ճիշտ է, որոնցով էլ նա ենթակա է պատասխանատվության և պատժի:
Ամբաստանյալ Արմեն Լազրի Երեմյանի արարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ճիշտ է, որով էլ նա ենթակա է պատասխանատվության և պատժի:
Ամբաստանյալ Նարեկ Մխիթարի Սերոբյանի արարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ճիշտ է, որով էլ նա ենթակա է պատասխանատվության և պատժի:
ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:
ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:
ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պատիժ նշանակելիս, պատժաչափը որոշելիս դատարանը հաշվի է առնում արարքի բնույթն ու հանրության համար դրա վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձը, նրա պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող, ծանրացնող հանգամանքները:
ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, ամբաստանյալ Սանթուր Սմբատի Դոմբրյանի կատարած հանցանքը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի դասվում է ոչ մեծ ծանրության հանցանքների թվին, ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքը՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին, ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքը՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դասվում է ծանր հանցանքների թվին:
ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված, ամբաստանյալ Արմեն Լազրի Երեմյանի կատարած հանցանքը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին:
ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված, ամբաստանյալ Նարեկ Մխիթարի Սերոբյանի կատարած հանցանքը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին:
Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Դոմբրյանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, երիտասարդ է:
Նրա պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա:
Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Երեմյանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, երիտասարդ է, զղջում է կատարածի համար:
Նրա պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա:
Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Սերոբյանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող

հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, երիտասարդ է, զղջում է կատարածի համար:
Նրա պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա:
03.10.2013թ. ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է ,,Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին'' որոշումը, որի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պատժից պետք է ազատել այն անձանց, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:
Նկատի ունենալով, որ ամբաստանյալներ Արմեն Լազրի Երեմյանը, Նարեկ Մխիթարի Սերոբյանը հանցանքը կատարել են մինչև 01.09.2013թ, ուստի դատարանը գտնում է, որ նրանց նկատմամբ համաներում կիրառելու սահմանափակումներ չկան:
Ելնելով քրեական օրենսդրության սկզբունքներից, սոցիալական արդարության վերականգնման և պատժի նպատակների իրականացման անհրաժեշտությունից, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Սանթուր Սմբատի Դոմբրյանը պետք է կրի նշանակված պատիժը:
Սանթուր Սմբատի Դոմբրյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Արմեն Լազրի Երեմյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց հրամանատարության հսկողության հանձնելը պետք է վերացնել:
Նարեկ Մխիթարի Սերոբյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց հրամանատարության հսկողության հանձնելը պետք է վերացնել:
Իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնում պահվող Ս. Մովսիսյանի զինվորական բաճկոնն ու երկարաթև մայկան պետք է վերադարձնել տուժող Մովսիսյանին, իսկ Ս. Դոմբրյանի ներկայացրած դանակը պետք է ոչնչացել՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:
Գործով քաղաքացիական հայց չկա:

4. Եզրափակիչ մաս

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-րդ - 360-րդ, 364-րդ, 365-րդ, 369-րդ - 373-րդ հոդվածներով, ,,Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին'' ՀՀ Ազգային Ժողովի 03.10.2013թ. որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով՝ դատարանը
Վ Ճ Ռ Ե Ց

Սանթուր Սմբատի Դոմբրյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և դատապարտել
ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 3 /երեք/ ամիս ժամկետով:
ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ազատազրկման 3 /երեք/ ամիս ժամկետով:
ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ազատազրկման 1 /մեկ/ ատրի 6 /վեց/ ամիս ժամկետով:
ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով՝ ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով:
ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ սահմանել ազատազրկում՝ 4 /չորս/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով:
Պատժի սկիզբը հաշվել 14.01.2013թվականից:
Սանթուր Սմբատի Դոմբրյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Արմեն Լազրի Երեմյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտել ազատազրկման 1 /մեկ/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով:
Արմեն Լազրի Երեմյանի նկատմամբ կիրառել ՀՀ Ազգային Ժողովի 03.10.2013 թվականի ,,Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին'' որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը և ազատել պատժի կրումից:
Արմեն Լազրի Երեմյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց հրամանատարության հսկողության հանձնելը՝ վերացնել:
Նարեկ Մխիթարի Սերոբյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտել ազատազրկման 1 /մեկ/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով:
Նարեկ Մխիթար Սերոբյանի նկատմամբ կիրառել ՀՀ Ազգային Ժողովի 03.10.2013 թվականի ,,Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին'' որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը և ազատել պատժի կրումից:
Նարեկ Մխիթարի Սերոբյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց հրամանատարության հսկողության հանձնելը՝ վերացնել:
Իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնում պահվող Ս. Մովսիսյանի զինվորական բաճկոնն ու երկարաթև մայկան վերադարձնել տուժող Մովսիսյանին, իսկ Ս. Դոմբրյանի ներկայացրած դանակը ոչնչացել՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Քաղաքացիական հայց չկա:
Դատավճիռն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելուց մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան: